ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՐԹՈՒՂԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՏԿՆ-ԳՀԾՁԲ-2018/30

ք. Երևան «25» 09. 2018թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Լոկատոր>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երթուղային ցանցի մոդելավորման և ճանապարհային ցանցի ակտիվների կառավարման և սպասարկման աշխատանքների պլանավորման և վերահսկման համակարգի մշակման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 39987000 (երեսունինը միլիոն ինը հարյուր ութսունյոթ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 39987000 (երեսունինը միլիոն ինը հարյուր ութսունյոթ հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է

տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, Կենտրոնական գանձապետարան ՀՀ 900011020238 ՀՎՀՀ 02565518	«Լոկատոր» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 36ա-22 «Կոնվերսբանկ» ՓԲԸ Հ/Հ 1930011489910100 ՀՎՀՀ 00095651
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«25» 09 2018թ. կնքված
ՏԿՆ-ԳՀԾՁԲ-2018/30 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	48321160/1	Երթուղային ցանցի մոդելավորման և ճանապարհային ցանցի ակտիվների կառավարման և սպասարկման աշխատանքների պլանավորման և վերահսկման համակարգի մշակման ծառայություններ	դրամ	39987000	1		Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվելու օրվանից 240 օրացուցային օր

Ծրագրային համակարգի կառուցվածքը և նպատակային նշանակությունը

Ծրագրային համակարգի նպատակային նշանակությունը

Համակարգը նախատեսված է ներմարզային և միջմարզային երթուղային ցանցի մոդելավորման, օպտիմալ երթուղիների կառուցման և դրանց շահագործման գործընթացի վերահսկման համար, ինչպես նաև ճանապարհային ցանցի ակտիվների կառավարման և սպասարկման աշխատանքների պլանավորման և վերահսկման համար: Այն պետք է կազմված լինի հետևյալ ենթահամակարգերից.

- **Հիմնական ենթահամակարգ** (Երթուղային և Ճանապարհային ցանցերի համար)
- **Քարտեզային ենթահամակարգ** (ՀՀ մանրամասն էլ. քարտեզ և հասցեների բազա)
- **Մոբայլ հավելված 1** (քաղաքացիների համար, երթուղային ցանցի մասով)
- **Մոբայլ հավելված 2** (քաղաքացիների համար, ճանապարհային ցանցի մասով)
- **Մոբայլ հավելված 3** (սպասարկման տեսուչների համար)
- **Մոբայլ հավելված 4** (կամավորների համար, ուղևորահոսքերի հաշվառման համար)

Հիմնական ենթահամակարգ

- Հիմնական ենթահամակարգը պետք է լինի web և որպես տվյալների հենք պետք է օգտագործվի MySQL

Քարտեզային ենթահամակարգ

- Ենթահամակարգը պետք է պարունակի ՀՀ մանրամասն էլեկտրոնային քարտեզ և կոորդինատների հետ համակցված հասցեների բազա, որը պետք է ֆիզիկապես գտնվի նույն սերվերում, որում տեղադրված կլինի հիմնական ծրագրային փաթեթը:

Համակարգի մշակմանը, շահագործմանը, զարգացմանը և այլ համակարգերի հետ ինտեգրմանը ներկայացվող պահանջներ

- Համակարգի դիզայնը և ֆունկցիոնալ գործիքակազմը կատարողը պետք է համաձայնեցնի պատվիրատուի հետ:
- Համակարգի հետագա զարգացումը և այլ համակարգերի հետ ինտեգրումը ապահովելու նպատակով, ամբողջ ծրագրային համակարգը՝ ներառյալ էլեկտրոնային քարտեզը, հասցեների բազան, և բոլոր ենթահամակարգերը պետք է մշակված լինեն կատարողի կողմից, կամ կատարողը պետք է ունենա դրանցում փոփոխություն կատարելու հնարավորություն և իրավունք:
- Համակարգը պետք է ինտեգրվի երթևեկության ինտենսիվության չափման թվով 30 SIEMENS սարքերի հետ, տվյալների առցանց փոխանակում
- Համակարգի շահագործման ամբողջ ընթացքում չպետք է պահանջվի այլ վճարովի ծրագրերի կիրառում:

Երթուղային ցանցի մոդելավորման ենթահամակարգը պետք է ապահովի հետևյալ հնարավորությունները՝

1. Մուտքագրված տվյալների հիման վրա հաշվի(մոդելավորի) ՀՀ միջմարզային և ներմարզային երթուղային ցանցի օպտիմալ մոդելը, հաշվի առնելով ոլորտում գործող նորմատիվային պահանջները:
2. Յուրաքանչյուր երթուղու չվացուցակի ավտոմատ գեներացում, համաձայն գործող նմուշների
3. Հաշվի առնելով յուրաքանչյուր երթուղու սպասարկման(շահագործման) ծախսերը, երթուղիները խմբավորի այնպես, որ ոչ շահութաբեր երթուղիները ներառվածլինեն շահութաբեր երթուղիների հետ այնպես, որ խումբը լինի շահութաբեր, ներմարզային երթուղիների կապը միջազգային երթուղիների հետ(ըստ տարածաշրջանների)
4. Համակարգը պետք է թույլ տա իրականացնել երթուղիների ցուցադրում էլ. քարտեզի վրա, փնտրում, խմբավորում, երթուղու մասին մանրամասն տվյալների դիտում
5. Ճանապարհների գույքագրում
6. Ճանապարհների պահպանման և շահագործման մոնիթորինգ
7. Զարգացման ծրագրերի իրականացում
8. Տեխնիկական աջակցություն և ճանապարհների անվտանգության ապահովում
9. Թեժ գծով ստացվող զանգերի էլեկտրոնային գրանցում և ուղղորդում

10. Համակարգում առկա բոլոր տվյալների հիման վրա հաշվետվությունների գեներացում

Երթուղային ցանցի մոդելավորման համար որպես մուտքային տվյալներ պետք է կիրառվեն հետևյալ պարամետրերը

- Բնակավայրեր
- Բնակչության թվաքանակ
- Բնակավայրի տեսակ
- Կանգառներ
- Ուղևորախմբեր(ըստ ժամերի և սկզբնակետ վերջնակետի)
- Երթուղու սպասարկման առավելագույն արժեք

Երթուղային ցանցի մոդելավորման ծրագրային մասից պետք է ստացվեն հետևյալ տվյալները

- Երթուղիներ՝ ներառյալ
  1. Չվացուցակ
     - Երթուղու անվանում
     - Երթուղու տեսակ(ավտոբուսային, միկրոավտոբուսային)
     - Երթուղու իրականացման տևողությունը
     - Երթուղու երկարությունը
     - Երթուղու Սկզբնակետ-Վերջնակետ
     - Երթերի տեսակ ըստ շաբաթվա օրերի
     - Կանգառներ
     - Երթուղու սեզոնայնություն
     - Երթերի (շրջապտույտների) քանակը

  2. Տ/Մ-ների քանակ
  3. Սպասարկման ինքնարժեք
  4. Լցվածության գործակից
  5. Ուղևորների սպասելու ժամանակ

Երթուղային ցանցը պետք է մոդելավորվի հաշվի առնելով ոլորտը կարգավորող նորմատիվային փաստաթղթերի պահանջները

Ճանապարհային ցանցի սպասարկման ենթահամակարգը պետք է ապահովի հետևյալ հնարավորությունները՝

1. Ճանապարհների գույքագրում, ներառյալ՝
   - Ճանապարհի անվանում
   - Ճանապարհի պայմանանիշ և համար
   - Մարզ
   - Տարածաշրջան
   - Երկարություն
   - Տեխնիկական կարգ
   - Կոորդինատների զանգված

- Ծածկույթի տեսակ
- Լուսավորություն
- Միջին լայնություն
- Նշանակություն
- Ճանապարհների երկայնքով առկա համայնքներ

Տրանսպորտային օբյեկտներ, ինժեներական կառույցներ

i. Թունելներ
   1. Անուն
   2. Սկիզբ
   3. Վերջ
   4. Բարձրություն
   5. Լայնություն
   6. Լուսանկարներ
ii. Կամուրջներ և ուղեանցեր
   1. Անուն
   2. Երկարություն
   3. Թռիչքների քանակ և երկարություններ
   4. Համակարգի տեսակ
   5. Նյութը
   6. Գաբարիտ
iii. Սպասարկման կետեր
   1. Անուն
   2. Տեսակ
   3. Կոորդինատներ
   4. Լուսանկարներ
iv. Հենապատեր
   1. Տեսակ
   2. Երկարություն
   3. Բարձրություն
   4. Նյութը
   5. Կոորդինատներ
v. Ջրթող խողովակներ
   1. Երկարություն
   2. Տրամագիծ
   3. Նյութ
   4. Կոորդինատներ

Անվտանգության տարրեր

5. Ճանապարհային նշաններ
   a. Տեսակ
   b. Կոդ
   c. Տեղակայման կոորդինատներ
6. Արգելափակոցներ

7. Ուղղորդ սյուներ

Հաղորդուղիներ

8. Սյուներ
   a. Կոորդինատներ
   b. Տեսակ
9. Ջրատարեր
10. Գազատարեր

2. Ճանապարհների պահպանման և շահագործման մոնիթորինգ
   vi. Ճանապարհների վիճակի ուսումնասիրություն և գնահատում ըստ տարածաշրջանների
   vii. Յուրաքանչյուր տարածաշրջանի համար Ձմեռ, Գարուն-Ամառ-Աշուն ժամանակահատվածների պահպանման գնահատման ակտի էլեկտրոնային տարբերակի ստեղծում, հետևյալ պարամետրերով
      i. Տարածաշրջան
      ii. Ճանապարհ
      iii. Ճանապարահատված
      iv. Վիճակ
      v. Պահանջվող մակարդակ

   viii. Ընթացիկ պահպանման աշխատանքների վերահսկում
   ix. Աշխատակիցների ստուգայցերի վերահսկում մոբայլ հավելվածի օգնությամբ
   x. Աշխատակցի կողմից հայտնաբերված թերությունների էլեկտրոնային արձանագրում համաձայն գործող ձևանմուշի
   xi. Աշխատակցի կողմից կատարված ստուգման մասին գրառում ընթացիկ ամառային և ձմեռային պահպանման աշխատանքների մասին, համաձայն գործող ձևանմուշի

3. Զարգացման ծրագրերի իրականացում
   xii. Ճանապարհների ուսումնասիրություն և գնահատման էլեկտրոնային ձևանմուշի լրացում

Այլուսակներ1.doc Այլուսակներ.doc

   xiii. Երթևեկության ինտենսիվության հաշվառում ըստ գործող ձևանմուշի
   xiv. Ճանապարհի անձնագրային տվյալների համապատասխանության ստուգում պլանայինին

4. Տեխնիկական աջակցության և ճանապարհների անվտանգության ապահովում
   xv. Անվտանգության ապահովում(ներառում է սև կետերի հայտնաբերում, պատճառի հայտնաբերում, պատճառի վերացում)
   xvi. Ամսաթիվ/Ժամ
   xvii. S/U տեսակ

xviii. C կարգի վարորդական իրավունքի դեպքում սովորել է նոր է հանձնել թե ոչ
xix. Պատահարի կոորդինատ
xx. Պատահարի տեսակ(վթար, վրաերթ, շրջում ....)
xxi. Զոհերի և տուժածների մասին տվյալներ
xxii. Եղանակը (ձյուն անձրև քամի չոր)
xxiii. Ճանապարհի վիճակը
xxiv. Ճանապարհի տեսակը
xxv. Ովքեր են մեղավորները
xxvi. Այլ հետևանքներ

b. Ճանապարհների վիճակի ուսումնասիրություն տարին 2 անգամ, անձնագրային տվյալների դիտում, հայտնաբերված թերությունների արձանագրում
   i. Ճանապարհային կահավորանք
   ii. նշանների առկայություն
   iii. գծանշում

Մոբայլ հավելված 1

Հավելվածը պետք է մշակվի Android և IOS համակարգերի համար և պետք է ապահովի հետևյալ ֆունկցիաները՝

5. Առկա երթուղիների ցուցադրում քարտեզի վրա
6. Յուրաքանչյուր երթուղու մասին մանրամասն տվյալների դիտում
7. Գտնվելու վայրից նշված կետ հասնելու համար օպտիմալ երթուղիների ցուցադրում
8. Երթուղիների փնտրման հնարավորություն
9. Երթուղիների կամ դրանց չվացուցակների փոփոխության մասին հաղորդագրության ստացում

Մոբայլ հավելված 2

Հավելվածը պետք է մշակվի Android և IOS համակարգերի համար և պետք է ապահովի հետևյալ ֆունկցիաները՝

10. Ճանապարհային ցանցի, դրա վիճակի ցուցադրում էլ. քարտեզի վրա
11. Ճանապարհների դժվար անցանելի հատվածների ցուցադրում էլ. քարտեզի վրա
12. Ճանապարհների վթարված, փակ հատվածների ցուցադրում էլ. քարտեզի վրա
13. Օգտվողներին քարտեզին կապակցված հաղորդագրություն ուղարկելու հնարավորություն

Մոբայլ հավելված 3

Հավելվածը պետք է մշակվի Android համակարգի համար և պետք է ապահովի հետևյալ ֆունկցիաները՝

14. Ճանապարհային ցանցի մոնիթորինգի իրականացում
15. Վնասված, վերանորոգման ենթակա հատվածների նշում քարտեզի վրա

16. Վերանորոգված և նոր կառուցված ճանապարհային հատվածների նշում քարտեզի վրա
17. Հսկողական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ այլ հնարավորություններ

Մոբայլ հավելված 4

Հավելվածը պետք է մշակվի Android համակարգի համար և պետք է ապահովի հետևյալ ֆունկցիաները՝

18. Օգտվողի տվյալների մուտքագրում
19. Առկա կանգառի ընտրություն
20. Յուրաքանչյուր կանգառի համար ուևորահոսքի տվյալների մուտքագրում(ամսաթիվ, ժամ, քանակ, սկզբնակետ, վերջնակետ)
21. Օգտվողներին հաղորդագրություն ուղարկելու հնարավորություն

Համակարգի շահառուներ

Համակարգը պետք է ապահովի հետևյալ հաստատությունների և ստորաբաժանումների համար նախատեսված միջերեսներ(ինտերֆեյսներ), որի միջոցով բոլոր շահառու կողմերը կկարողանան իրականացնել իրենց գործառույթները:

1. Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն ՊՈԱԿ
   - Տեխ. հսկողության բաժին (ճանապարհների վիճակի հսկողություն, նորոգման աշխատանքների կազմակերպում և հսկողություն)
2. Ճանապարհաշինության քաղաքականության վարչություն (առկա տվյալների դիտում)
3. Տրանսպորտի վարչություն
   - Փոխադրումների քաղաքականության բաժին
   - Տեխնիկական քաղաքականության բաժին
4. Տրանսպորտային տեսչություն
   - Ուղևորափոխադրումների իրականացման վերահսկողություն
5. Հայավտոկայարան ՓԲԸ Ավտոկայաններ
   - Երթակարգավարական կետեր
6. Թեժ գիծ
   (Ահազանգերի ընդունում, էլ քարտի մուտքագրում)

Աշխատանքների իրականացման գրաֆիկ

Աշխատանքները պետք է իրականացվեն համաձայն ներկայացված գրաֆիկի

Աշխատանքներ	Ամիսներ							
	1	2	3	4	5	6	7	8
Համակարգի մշակում								
Ուսուցում								

Անձնակազմի ուսուցում

Անձնակազմի ուսուցումը պետք է իրականացվի երկու փուլով՝ տեսական և գործնական: Տեսական պարապմունքների ժամանակ անձնակազմին կներկայացվի համակարգի ընդհանուր կառուցվածքը, աշխատանքի սկզբունքն ու առանձնահատկությունները: Հաջորդ քայլով, յուրաքանչյուր աշխատակցի մանրամասն կներկայացվի իր գործառույթների համար նախատեսված ծրագրային ինտերֆեյսը, դրանում առկա ֆունկցիաներին ու հնարավորությունները:

Ուսուցման տեսական մասի ավարտից հետո կկատարվեն պրակտիկ վարժանքներ, որի ժամանակ յուրաքանչյուր աշխատակից հնարավորություն կունենա գործնականում կիրառել և ամրապնդել ձեռք բերված գիտելիքները:
Պրակտիկ վարժանքները պետք է իրականացվեն ըստ նախապես մշակված սցենարի և հնարավորինս մոտ լինեն իրական պայմաններին:
Ուսուցման ավարտից հետո յուրաքանչյուր աշխատակից պետք է հստակ տիրապետի համակարգից օգտվելու կանոններին և պահանջներին, պետք է կարողանա օգտվել իր համար նախատեսված ծրագրային ինտերֆեյսի բոլոր ֆունկցիաներից և հնարավորություններից:

Անվճար երաշխիքային սպասարկում

Համակարգի ընդունումից հետո կատարողը պետք է 12 ամիս իրականացնի համակարգի անվճար երաշխիքային սպասարկում: Երաշխիքային սպասարկման ընթացքում պետք է իրականացնի՝

- Համակարգում և դրա առանձին մասերում հայտնաբերված ծրագրային թերությունների և սխալների ուղղում
- Ծրագրային համակարգի թարմացում
- Անհրաժեշտության դեպքում նոր ֆունկցիաների ավելացում
- Քարտեզի թարմացում

Ծրագրային համակարգի սխալներ և թերություններ են համարվում այն դեպքերը, որոնք հանգեցնում են համակարգի կամ դրա մաս կազմող ֆունկցիաների աշխատանքի խափանման կամ ոչ ճիշտ աշխատանքի:

Պահանջվող սերտիֆիկատներ

1. ISO 9001:2015 կամ համարժեք

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, Կենտրոնական գանձապետարան ՀՀ 900011020238 ՀՎՀՀ 02565518	«Լոկատոր» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 36ա-22 «Կոնվերսբանկ» ՓԲԸ Հ/Հ 1930011489910100 ՀՎՀՀ 00095651
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
ՏԿՆ-ԳՀԾՁԲ-2018/30 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	48321160/1	Երթուղային ցանցի մոդելավորման և ճանապարհային ցանցի ակտիվների կառավարման և սպասարկման աշխատանքների պլանավորման և վերահսկման համակարգի մշակման ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	39987000	39987000	39987000	39987000	39987000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011020238
ՀՎՀՀ 02565518

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Լոկատոր» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 36ա-22
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011489910100
ՀՎՀՀ 00095651

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն